ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎ

Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Իր ողջ կյանքի ընթացքում Հովհաննես Թումանյանը թե՛ հրապարակախոսական և թե՛ գեղարվեստական գործերում բազմիցս անգրագարձել է ժողովուրդների համերաշխության և բարեկամության ամրապնդման խնդիրներին, նրանց երջանկության նախապայմանը համարել է ազգերի եղբայրությունն ու խաղաղ գոյակցությունը։ Այդ իսկ պատճառով, հակադրվելով ազգամիջյան պառակտումներ բորբոքող ցարական իշխանությունների քաղաքականությանը և ելնելով անդրկովկասյան ժողովուրդների տերիտորիայի միասնությունից, շահերի ու պատմական ճակատագրի ընդհանրությունից և դրանցով պայմանավորված ազգային հոգեբանության ու սովորությունների նմանությունից, որոնք նպաստել են նրանց բարեկամության ամրապնդմանը, Թումանյանը ձգտել է ոչ միայն կանխել ազգամիջյան ընդհարումները, այլև իր ժամանակի առաջադեմ գործիչների հետ միասին մերկացրել է ազգամիջյան կռիվներ կազմակերպողներին և իր ստեղծագործության մեջ արտացոլել ժողովուրդների բարեկամությունն ու նրանց շահերի ընդհանրությունը։

Հումանիստական նման աշխարհայեցողության արտահայտությունն է «Հաշտություն» բանաստեղծությունը։ 1892 թ., երբ ցարական միապետությունը մի կողմից բորբոքում էր հայահալած քաղաքականություն, մյուս կողմից՝ փոխադարձ թշնամանք ու ազգային պառակտումներ հրահրում ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ և վրաց ժողովուրդների միջև, Թումանյանը հանդես է գալիս այդ բանաստեղծությամբ, որտեղ ընդգծում է երկու ազգերի հոգեհարազատությունը, հին ժամանակներից եկող բարեկամությունը և կոչ անում ավելի ամրապնդել եղբայրական համագործակցությունը։ Հակադրվելով հայ և վրաց դրկից ազգերի թշնամանքից խոսող ազգայիններին, հեղինակը շնչավորել է երկու ժողովուրդներին խորհրդանշող Մասիս և Կազբեկ լեռները. դիմելով Կազբեկին, Մասիսն ասում է, որ իրենք երկուսն էլ «հին փառքերով» ու «նոր ցավերով» ազգականներ են և միասին բազմիցս են կանգնել փոթորիկների դիմաց։ Բանաստեղծը արտահայտում է այն գաղափարը, որ նոր ժամանակներում էլ ազգամիջյան թշնամանքի քաղաքականությանը կուլ չգնալու, հետևապես և չպարտվելու համար անհրաժեշտ է միասնական լինել, որ հայ և վրաց ժողովուրդների բարօրության ամենաառաջին ու կարևոր պայմանը հաշտությունն է.

Այստեղ տուր ձեռդ, մոտեցիր, ընկեր,
Մի նայի՛ր ետև, ինչ է կատարվում...
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում։

Մոտեցիր, իմ հին ազգական,
Եվ թող որոտան լեռները բոլոր,
Թող լինեն վկա մեր նոր հաշտության, —
Խոսքս վերջացրեց Մասիսն ալևոր[1]։

Այս բանաստեղծությամբ սկզբնավորվեց այն գործունեությունը, որ մեծ դեմոկրատը հետագայում ծավալեց ազգերի խաղաղ գոյակցության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ։ Հարևան ազգերի պատմությանը լավատեղյակ բանաստեղծին քաջ հայտնի էր, որ «միևնույն կրակով այրվող» հայ և վրաց ժողովուրդները, չնայած հերոսական մաքառումներին, պատմական որոշ ժամանակահատվածում գրկվելով իրենց ազատությունից, այնուհանդերձ չէին կորցրել լավագույն ապագային հասնելու հույսը։ Հովհ. Թումանյանը հավատում էր, որ հալածանքների ու տանջանքների ներքո չի ընկճվել երկու ազգերի կամքը, որ կգա ազգային ու սոցիալական ազատագրության ժամը և պայքարում էր դրա համար։ Ժողովուրդներին ծառայելու պատրաստակամ բանաստեղծը, իր գրական գործունեության ընթացքում անխզելիորեն կապված լինելով աշխատավոր մասսաների հետ, փառաբանելով նրանց հոգու պայծառությունը, իր ստեղծագործություններում որպես մարդկության երջանկության և բարօրության նախապայման ընդգծում էր խաղաղության անհրաժեշտությունը, և այդ ամենի շնորհիվ նրա գործունեությունը լայն ժողովրդականություն էր վայելում։

Ապրելով ու գործելով Վրաստանի մայրաքաղաքում, Հովհ. Թումանյանը իր ուշադրության կենտրոնում է պահել առաջին հերթին հայերի և վրացիների փոխհարաբերության հարցը։ Լավագույն ցանկություններ և անկեղծ զգացմունքներ տածելով դեպի բոլոր, մասնավորապես անդրկովկասյան եղբայրական ժողովուրդները, հատկապես ակնածանքով է նա խոսել հայերի և վրացիների դարավոր բարեկամության մասին, շեշտելով նրանց բախտակից ու հարազատ եղբայրներ լինելու հանգամանքը, դարերի ընթացքում թշնամիների դեմ մղած կռիվներում նրանց համագործակցությունը։ «Եվ էն երկու ժողովուրդ,— գրել է Թումանյանը,— որոնք իրենց պատմությունը սկսում են նրանով, թե Հայկոսը (Հայկ) և Քարթլոսը եղբայրներ էին, մնացել են ու մնում են անսասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և մեծագույն հիշատակներով»[2]։

Հայ և վրաց ժողովուրդների «փոթորկալից պատմական ճակատագրին», նրանց բախտակից լինելու փաստին Հովհ. Թումանյանը անդրադարձել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպին նվիրված իր շատ ուշագրավ ուսումնասիրության մեջ։ Համակողմանիորեն ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմությունը, ինչպես նաև պատմական իրադարձությունների ընթացքը, բանաստեղծը հստակորեն հասկացել է, որ հայության և անդրկովկասյան մյուս բախտակից ժողովուրդների փրկարարը անընդհատ բնաջնջումներից ու կոտորածներից հեղել է Ռուսաստանը։

Թումանյանը շեշտում է, որ հայերը և վրացիները «դարերի փորձով տեսան», որ անկարող են պայքարել «շրջապատող այլակրոն ու բարբարոս ցեղերի դեմ», որ «մի հզոր ձեռք է հարկավոր էս բարբարոսական հնդեղի դեմ»։ Եվ

---

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հատ. I, էջ 449—450։
2 Նույն տեղում, հատ. IV, էջ 421։

նրանք իրենց հայացքը հառում են դեպի Ռուսաստան, որովհետև «հայերի հետ քրիստոնյա Վրաստանն էլ ուժ չունեին, ճար ու ճանապարհ չունեին։ Ամեն տեղ դիմել, ամենքին փորձել էին ու հասկացել, որ միայն Ռուսաստանն է լինելու իրենց էդ դժոխքից փրկողը։ Եվ դիմում էին ու դիմում, աչքները հյուսիս հառած Կովկասի նահատակ քրիստոնյա ժողովուրդները, սպասում գալիք փրկարար օրին ու հարվածին»[3]։

Խորամուխ լինելով պատմական իրադարձությունների մեջ և նկատի ունենալով պատմության դասերը, Թումանյանը, ճիշտ կողմնորոշվելով, հաստատում է. «Դարերի փորձը, պատմության ընթացքն ու ժամանակի մատը ցույց տվին, որ այդ հույսն ու ապավենը Ռուսաստանն էր լինելու, որ օրեցօր զորանալով ու իր ափերից դուրս հորդելով, իր դիվիզիաներով հորձանք էր տալիս դեպի արևելք։ Եվ Հնդկաստանից մինչև Կովկաս, ամենայն հայոց կաթողիկոսից մինչև վերջին շինականը՝ հայ ժողովրդի հայացքը կենտրոնացավ Ռուսաստանի վրա։ Հիրավի, հզոր Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն ու տանջվող հայ ժողովրդի հույսերը բռնում էին իրար։ Այստեղից էլ առաջ եկավ այն մոտիկությունն ու այն ջերմ հավատը, որ գոյություն ուներ ռուս պետության ու հայ ժողովրդի մեջ և որ անաղարտ ու անսասան մնում էր մինչև ութսունական թվականները։

Այդ հավատն ու սերը երկուստեք արդարացան կովկասյան պատերազմների մեջ, իսկ կովկասյան պատերազմների մեջ՝ հայոց պատմության տեսակետից՝ առանձին կարևորություն ունի 1826—1827 թվականների ռուս-պարսկական պատերազմը»[4]։ Այդ պատերազմից հետո հայ ժողովուրդը մեկընդմիշտ ազատագրվեց արևելյան բռնապետության կամայականություններից, և անդրկովկասյան ժողովուրդներն արդեն ամբողջովին իրենց բախտը կապեցին ռուս մեծ ժողովրդի հետ։ Եվ իրավացի է Թումանյանը, երբ գրում է. «Կովկասում եղած ռուս-տաճկական կամ ռուս-պարսկական պատերազմները իրենց հետևանքներով գուցե այնքան նշանավոր չեն եղել կռվող կողմերի համար, որքան կովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի համար»[5]։

Հեռատես բանաստեղծն իր հայրենիքի բախտը երբեք չի կապել եվրոպական պետությունների հետ։ Տեսնելով անլուր տառապանքների մեջ գալարվող հայրենիքը և ասես պատասխանելով եվրոպամոլ գործիչներին, նա գրել է.

Ինչո՞ւ ես տխուր,
Թշվառ Հայաստան,
է՞ր է վիզդ ծուռ,
Մայր իմ սիրական։

Ինչո՞ւ աչերդ
Լի են արտասուք,
է՞ր ես խեղճ նայում
Դեպի արևմուտք։

Դուն էլ լավ գիտես,
Որ արևմուտքեն
Օգուտ չրկա քեզ
Չատ անբույժ վերքեն[6]։

3 Նույն տեղում, հատ. VI, էջ 261—262։
4 Նույն տեղում, էջ 254—255։
5 Նույն տեղում, էջ 257։
6 Նույն տեղում, հատ. I, էջ 433։

Իր հայրենիքին «անբույժ վերք» հասցնող եվրոպական պետությունների հասցեին նետված առաջին խոսքն է սա, որ հետագայում ավելի հիմնավոր է դառնում։ Իրեն հատուկ խորաթափանցությամբ ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմական անցյալը և խորամուխ լինելով ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձությունների մեջ, Հովհ. Թումանյանը, պատմության դասերով իմաստնացած, անհաշտ պայքար է մղում հայության ապագայի խնդիրը առաջադեմ Ռուսաստանից անջատող ու եվրոպական պետություններին ապավինող քաղաքագետների դեմ և անժխտելի փաստերի օգնությամբ անողոք կերպով մերկացնում Արևմուտքի նենգ քաղաքականությունը հայոց հարցում։ «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, — գրել է Թումանյանը,— հալածանքների ու գաղթականությունների հարց է. նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է։ Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ։ Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին։ Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»[7]։

Հովհ. Թումանյանը, իհարկե, չէր անտեսում, որ ռուսական կայսրության հիմնական նպատակը անդրկովկասյան ժողովուրդներին արևելյան բռնապետությունից ազատագրելը չէր, այլ դեպի հարավ իր տիրապետության սահմաններն ընդլայնելը և Անդրկովկասից դեպի Սև ծով ու Պարսից ծոց դուրս գալը։ Թումանյանն ընդունում էր իր ընդդիմախոսների նման փաստարկումները։ «Հարկավ,— գրում է բանաստեղծը,— մարդիկ կլինեն, որ կառարկեն, թե էդ ամենը Ռուսաստանը արել է, կանի, որովհետև էդպես են պահանջում իր շահերը։ Ես դրան կպատասխանեմ...— Ավելի լավ, որ հզոր Ռուսաստանի ու հայ ժողովրդի շահերը բռնում են իրար։ Հենց դրա մեջն է կայանում հայ ժողովրդի օգնությունը, և դրանով է նա հաստատ»[8]։

Բանաստեղծը չի ժխտում, որ արևելյան արշավանքների ժամանակ Ռուսաստանին անհրաժեշտ էր անդրկովկասյան ժողովուրդների օժանդակությունը, որովհետև «... Կովկասը իր բարեկամ ժողովուրդներով Ռուսաստանի համար թե ռազմական, թե տնտեսական տեսակետից հանդիսանում էր միակ ու հաստատուն կոմանը Արևելքում։ Էսպեսով էլ երկուստեք դաշն ու հավատարմությունը ապահովված էին վերին աստիճանի կենսական ու հաստատուն երաշխիքներով»[9]։

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման դիրքերում կանգնած բանաստեղծի համար բոլորովին պատահական չէ այն հանգամանքը, որ նա Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» բարձր է գնահատել առաջին հերթին որպես մի խոշոր կտավ, որտեղ արտացոլվել են 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի դրվագները, դրվագներ, որոնք մեծ հայրենասիրի գրչի ուժով ներծծվել են ռուսասիրությամբ։ «Վերք Հայաստանի»-ն ամենից առաջ նրա համար է սիրելի և թանկ մեր ժողովրդին, որ հանդիսանում է հրա-

7 Նույն տեղում, հատ. IV, էջ 230—231։
8 Նույն տեղում, էջ 215։
9 Նույն տեղում, էջ 227։

թափ բերան ամբողջ ազգի, կրակոտ բողոք ընդդեմ ասիական կոպիտ ու խավար բռնակալության, հարազատ թարգման հայի պատմական տրամադրության, մի հին ցանկություն— տեսնել որսին իրենց աշխարհքում։ Եվ արձագանքը այնքան նշանավոր ժամանակի և դեպքերի, որ հայի համար բերին մի նոր դրություն, մի նոր օր ու կյանք»[10],—գրել է Թումանյանը Խ. Արովյանին նվիրված իր անավարտ ուսումնասիրության մեջ։

Հովհ. Թումանյանը իր «Կարևոր հույսն ու դարևոր ճանապարհը» հոդվածում մատնանշել է, որ հայ և ռուս ժողովուրդների հնուց եկող փոխադարձ վստահության հանգամանքը հաճախ անտեսվել է ցարական պաշտոնյաների կողմից, որոնցից «եղել են էնպեսիները, որ նույնիսկ իրենց հակառակ ընթացքով պատճառ են դարձել շատ թյուրիմացությունների ու ժամանակավոր սառնության։ Բայց նրանք, որոնք պարզ աչքով են նայել գործին ու ճշմարիտ գաղափար են կազմել, նրանց բոլորի վերաբերմունքը եղել է պարզ ու կտրուկ— հայասեր»[11]։

Մեծ հումանիստը, ջերմորեն սիրելով ռուս աշխատավոր մարդուն, նրան երբեք չի նույնացրել ցարական իշխանության ներկայացուցիչների հետ, միշտ էլ խոր ատելություն է տածել ռուս իշխանավորների, ռուսական չինովնիկության նկատմամբ։ Այս առումով ուշագրավ է բանաստեղծի «Փորձիչը» հոդվածը, որտեղ պատասխանելով ռուս ռեակցիոն հրապարակախոսներից մեկին, որը կասկածի տակ առնելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, հավատ չի ընծայում հայության հավատարմությանն ու համերաշխությանը ռուս մեծ ազգին և պնդում է, թե դեռևս պետք է ստուգման ենթարկել, փորձել հայ ժողովրդի տածած զգացմունքները դեպի Ռուսաստանը, Թումանյանը բորբոքված, արժանապատվության բարձր գիտակցությամբ գրում է. «Ղուք ո՞վ եք, որ ուզում եք մեզ փորձի ենթարկել։ Մի՞թե դուք եք հանդիսանում այն Ռուսաստանը, որին վերադարձել են հայերը, մի՞թե դուք նրա հարազատ ներկայացուցի՞չն եք։ Մի՞թե դուք նրա թարգմա՞նն եք։

Ո՛չ։ Երբե՛ք։ Մենք եկել ենք ու գալիս ենք դեպի Ռուսաստանը, դեպի մեծ Ռուս ազգը, և եթե սիրել ու հարել ենք—նրան, ոչ թե ձեզ ու ձեր նմաններին, որոնք միշտ եղել են փոքր ու անսիրելի։ Եթե մենք միացած ենք անբաժան, ռուսական պետությանն ենք միացած, նրանից ենք տեսել բարիքներ, նրա հետ ենք կապել մեր հույսերը, նրան էլ ծառայել ենք հարազատի նման ամեն ասպարեզում»։ Եվ այնուհետև. «Եթե մենք կապված ենք եղել ու էսօր էլ նորից ավելի գիտակցաբար, ամրապնդում ենք կապը, էդ ռուս լավ մարդու հետ է, որի սրտի բարությունն ու մեծությունը վայել են իր հայրենիքի մեծությանն ու ազգային ուժին, ոչ թե ձեզ հետ, որ միշտ եղել եք փոքրոգի ու նեղսիրտ և խոսել միայն խորթությունից ու թշնամությունից»[12]։

Անդրկովկասյան ճնշված ժողովուրդների ազատագրումը և ապագան կապելով ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ, Հովհ. Թումանյանը ցարական, ճորտատիրական Ռուսաստանը երբեք չի նույնացրել առաջադեմ, հեղափոխական Ռուսաստանի հետ։ Նա տեսել է երկու Ռուսաստան, Պուշկինի, Լերմոնտովի, Բելինսկու հայրենիքը տարբերել է «տիրերի ու ստրուկների»,

10 Ն. Թումանյան, Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, Երևան, 1956, էջ 12։

11 Նույն տեղում, հատ. VI, էջ 203։

12 Նույն տեղում, հատ. IV, էջ 270։

«կասպույտ մունդիրավորներին», ոստիկանական Ռուսաստանից։ Համադրելով տուս առաջավոր մտածողների հայրենասիրությունը և Անդրկովկասում փոխարքա Գոլիցինի գլխավորությամբ գործող չինովնիկության վարած քաղաքականությունը, բանաստեղծը համոզվում է, որ ցարական միապետությունը չէ, որ պետք է լիիրավ ազատություն բերի անդրկովկասյան ժողովուրդներին։ Թումանյանը պարզ տեսնում է, որ ռուսական կայսրությունը, որպես գաղութարար, ճնշում է փոքր ժողովուրդներին և իր իշխանությունը ավելի հաստատուն պահելու նպատակով նրանց լարում միմյանց դեմ։ Հետագայում, «Պայծառ էջեր» հոդվածում, նա այդ ժամանակաշրջանի մասին գրում է. «Հեղափոխության ուրվականից վախեցած ռուսական բյուրոկրատիան մի չար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը։ Էդ ուղղությամբ նա գործի ձեռնարկեց և Անդրկովկասում։ Անդրկովկասում պետք էր իրար դեմ հանել երեք ժողովուրդ—հային, վրացուն ու թուրքին»[13]։ Եվ ցարական կառավարությունը, անդրկովկասյան ժողովուրդներին ռուսական առաջին հեղափոխության պայքարից հեռու պահելու նպատակով, գործի է դնում պրովոկացիոն մեքենան։ Միապետության նկրտումները պսակվում են հաջողությամբ. տեղական նացիոնալիստների և ցարական պրովոկատորների օժանդակությամբ 1905 թ. կազմակերպվում են հայ-թուրքական կոտորածները։ Հարևան ու բախտակից հայ և ադրբեջանցի ժողովուրդները, զոհ գնալով ցարիզմի հրեշավոր ազգային քաղաքականությանը, ելնում են իրար դեմ։ Այդ եղբայրասպան կռիվների դեմ ընդվզում են ժամանակի առաջադեմ գործիչները, գրողները և մերկացնելով ազգերի մեջ թշնամանք սերմանող միապետության նպատակները, նրանք ազգային ատելության գաղափարախոսությանը հակադրում են հայ և ադրբեջանցի ժողովուրդների համերաշխության ու դարավոր բարեկամության գաղափարը։

Ազգերի խաղաղ համակեցության համար մարտնչող գործիչների շարքում առաջիններից մեկն է լինում Հովհ. Թումանյանը, որն այդ խառնակ ժամանակաշրջանում, իր կյանքը վտանգի ենթարկելով, եղբայրության ու բարեկամության քարոզով շրջում է Լոռու և Ղազախի հայկական ու ադրբեջանական գյուղերը։ Հետագայում մեծ հումանիստը իր այդ շրջանի գործունեության փոքր մի հատվածը արտացոլել է «Ալլահից ղրկվածը» պատմվածքում։ Վերհիշելով հայ-թուրքական այդ ընդհարումները, Թումանյանը գրում է. «1905 թվի աշնանն էր, թուրք-հայկական ընդհարումների ամենակատաղի ժամանակը։ Ես իմ հայրենիքում էի—Լոռու սարերում։ Մենք մի ժողով արինք ու որոշեցինք, թե՝ լոռեցիներս չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ, որովհետև եթե ուժեղ ենք՝ անխղճություն է դա, իսկ եթե թույլ ենք՝ հիմարություն է։ Բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և աշխատում ենք սերն ու խաղաղությունը պահել մեր սարերում ու ձորերում»[14]։

Անպաճույճ այդ պատմվածքը, որը ժողովուրդների միջև խաղաղություն ու համերաշխություն վերականգնելու ասպարեզում Թումանյանի գործունեության ամբողջ շղթայի մի օղակի, մի դեպքի նկարագրությունն է, ներծծված է ջերմ մարդասիրությամբ, մարդասիրություն, որն այն ժամանակաշրջանում անհավատալի է թվում ադրբեջանցի գյուղացի Բայրամին, որի կյանքը փրկում

13 Նույն տեղում, էջ 421։
14 Նույն տեղում, հատ. III, էջ 86։

է հայ բանաստեղծը։ «Շտապում եմ մի րոպե առաջ ուրախացնել նրան,— գրում է Թումանյանը,— թե ապահով է ու գտնվում է իր եղբայրների մեջ, ուզում եմ մի րոպե առաջ վայելել այդ վայրկյանի գերազանց հաճույքը»[15]. Սակայն Բայրամը չի հավատում և երբ համոզվում է, որ իր կյանքի փրկությունը իրականություն է այդ դաժան օրերին, նա իր փրկարարին համարում է ալլահի կողմից ուղարկված ու քիչ անց հանգիստ քնում։ Իսկ Թումանյանը մեծ գործ արած մարդու իրավացի գիտակցությամբ նայում է քնած ադրբեջանցուն և նրան թվում է, թե Բայրամը «հանդստանում էր ալլահի հովանավորության տակ, որ ասես թե նայում էր վերևի ջինջ կապույտից, իսկ ես նրանից պահապան էի կարգված, որ ոչ ոք չխանգարի Բայրամի հանգիստը։ Ես այն րոպեին զգում էի իմ պաշտոնի ամբողջ վեհությունը, և ոչ ոք չէր կարող խանգարել նրա հանգիստը»[16]։

Վեհության այդ զգացումով էլ Թումանյանը լոռեցիների անունից կոչ է հղում հարևան ադրբեջանական գյուղերի բնակչությանը։ Ուշագրավ է այն պատճառաբանությունը, որը ժողովուրդների հաշտարարի դերում հանդես եկող բանաստեղծը ծառայեցնում է որպես երկու հարևան ազգերի միջև համերաշխություն և խաղաղություն վերականգնելու միջոց. դա դարերի ընթացքում սրբագործված եղբայրության և հյուրընկալության սովորույթն է։ Թումանյանը Լոռու ձորերում ապրող ադրբեջանցի ազգաբնակչությանը համարում է «հեռու աշխարհքից» եկած և իր հայրենիքում հյուրընկալված մի ժողովուրդ, որը դառը քրտինք թափելով՝ զբաղված է իր հալալ աշխատանքով և մինչև հայ-թուրքական կոտորածները օտարություն չի զգացել հայոց աշխարհում։

Հայ-թուրքական ընդհարումների մղձավանջային օրերը բանաստեղծը համարել է դարձ դեպի պատմական բարբարոսությունները. «...մի երկու ամսում դարեր ապրեցինք,— ընդգծել է նա,— Չինգիզխանի ու Լենկթեմուրի դարերը։ Նրանց անօրենությունները տեսանք XX դարում...»[17]։ Մարդկության պատմության այդ հատվածը Թումանյանը բնութագրել է որպես գազանացած կրքերի ժամանակաշրջան և նշել, որ «մարդիկ քիչ են—գազանները շատ։ Եվ այժմ ապրում ենք մի ժամանակ, երբ մեծ ասպարեզ կա մարդու էդ վայրենի բնազդին և նա հանդես է եկել ահռելի չափերով»։ Այսուհանդերձ, Թումանյանը համոզված է, որ ազնիվ մղումներով մարդիկ դեռևս իսպառ չեն վերացել, որ «լավ հոգիներն էլ իրենց ամբողջ փայլով հրապարակ են իջել»[18] և դեմ-դիմաց պայքարում են ընդդեմ պառակտիչների։

Հովհ. Թումանյանը գոհունակությամբ է խոսել հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև հաշտություն վերականգնելու գործում իր կատարած դերի մասին։ «Ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու։ Եվ այսօր այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա՝ իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից»[19],— գրել է Թումանյանը Փ. Վարդազարյանին հասցեագրված նամակներից մեկում։

15 Նույն տեղում, էջ 87։
16 Նույն տեղում, էջ 88։
17 Նույն տեղում, հատ. V, էջ 295։
18 Նույն տեղում, էջ 303—304։
19 Նույն տեղում, էջ 298։

Իր այդ պայքարում Հովհ. Թումանյանը ղեկավարվել է այն պարզ գիտակցությամբ, որ ժողովուրդները «բնության մեջ ու բնության հետ ձուլված են ապրում, և դարերով ապրած կյանքն ու փորձն է նրանց առաջնորդում։ Էգ է պատճառը, որ նրանք էսքան էլ կարողանում են դիմանալ էն բոլոր թույներին, որ ներարկում են նրանց տանջված մարմնի մեջ հազար ու մի տեսակ կառավարիչներ ու ղեկավարներ ամեն տեսակ բարձր դաղափարի անունով և կամ ուղղակի բարբարոսաբար»[20]։

Բնության մեջ միաձույլ ու համատեղ, եղբայրաբար ապրող հայ և ադրբեջանցի ժողովուրդների հոգեհարազատության գաղափարի գեղարվեստական մարմնավորումն է «Ահմադ» պատմվածքը, որ Թումանյանը գրել է հայ-թուրքական ընդհարումներից հետո և որն ուղղված է նացիոնալիզմի ու ցարիզմի վարած քաղաքականության դեմ։

Միմյանց հոգեղությամբ ուրախանալը, իսկ նեղ օրերին իրար «հարեհաս» լինելը սովորական երևույթ է եղել երկու ժողովուրդների կյանքում նույնիսկ այն չարաբաստիկ օրերին, երբ պրովոկացիայի զոհ դարձած, թշնամանքի թույնով մոլորեցված հարևան ազգերը ելել են իրար դեմ։ Եվ բարեկամական այդ փոխհարաբերությունները հայ-թուրքական կոտորածների տարիներին եզակի չեն եղել։ Թումանյանը այդ հանգամանքին անդրադարձել է Լ. Զիփիանեան գրած նամակում, որտեղ նշելով, որ ժողովուրդների մեջ ընդհանրապես ուժեղ է միմյանց օգնության ձեռք մեկնելու զգացմունքը, որպես օրինակ բերում է հայերի ու ադրբեջանցիների փոխհարաբերությունները ազգամիջյան կռիվների ժամանակ։ «Ես ձեզ էն տեսակ սրտառուչ դեպքեր կպատմեմ,— գրում է բանաստեղծը,— և շատ ու շատ դեպքեր թուրքերի ու հայերի հարաբերություններից, էն տեսակ սրտալի եղբայրական վերաբերմունք թե՛ թուրքի, թե՛ հայի կողմից, որ կզարմանաք։ Եվ էդ էլ էն ժամանակ, երբ վատությունն ու կոտորածը ամեն կողմից քաջալերվում է ու բորբոքվում, իսկ լավություն անելն արգելվում, նույնիսկ մահվան սպառնալիքով արգելվում»[21]։

Հովհ. Թումանյանը քաջ գիտեր, որ ազատագրական մեծ պայքարի ելնելու առաջին ու կարևոր նախապայմանը ժողովուրդների խաղաղ գոյակցությունն է, նրանց համերաշխությունը և միատեղ ու աննահանջ կռիվը տիրող կարգերի դեմ։ Այդ իսկ պատճառով բանաստեղծին վրդովեցնում էին անդրկովկասյան ժողովուրդների վերուստ հրահրված ընդհարումները, որոնք չափազանց անպատեհ էին այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ նրանք, ընդհակառակը, պետք է միաձույլ հանդես գային ու միանային Ռուսաստանի ազատագրական պայքարին։

Ժողովուրդների լուսավոր ապագայի հաստատման ձգտող բանաստեղծը, հետևելով հասարակական-քաղաքական դեպքերի զարգացմանը, կանխազգում է, որ XX դարի առաջին տասնամյակում բորբոքված հայ-թուրքական կոտորածներին հաջորդող անդորրը չարագուշակ է, կարճատև դադար է միայն և որ «չար բախտի» հողմապտույտը ոչ հեռու ապագայում դարձյալ վերընթաց է ապրելու և իր մեջ առնելով մեծ ու փոքր ժողովուրդներին՝ բախումը դարձնելու է անխուսափելի, որն անտարակույս մահացու հարված է հասցնելու փոքրաթիվ

20 Նույն տեղում, հատ. IV, էջ 417։
21 Նույն տեղում, էջ 417։

ազգերի ինքնության խնդրին, և շատ հավանական է՝ ընդմիշտ վճռելու է նրանց լինել-չլինելու հարցը։

Կանխատեսելով, որ առաջիկայում պատերազմն անխուսափելի է և որ այն հատկապես ճակատագրական կարող է լինել փոքրաթիվ, մասնավորապես անդրկովկասյան ժողովուրդների համար, որովհետև այդ ժողովուրդների պաշտոնյա գործիչները շարունակում են գնալ «... նույն հին ճանապարհով, նույն հին ձևի պայքարներով, նույն հին երդերով... միշտ ատելություն բորբոքելով ու հեռդհետե գրավելով ավելի մեծ բազմություններ ու ավելի մեծ տարածություններ»[22], Թումանյանը զարհուրանքով նկատում է, որ նման իրավիճակը պատերազմական արհավիրքների տարիներին կարող է ավելի խորանալ, տեղիք տալ նոր թյուրիմացությունների, ազգամիջյան նոր ընդհարումների, որի մղձավանջային թանձր խավարին կուլ կգնան ազգերն ու ցեղերը։

Եվ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, որի նախադրյալները չէին վրիպել բանաստեղծի սրատես հայացքից։ Ըստ Թումանյանի, մեծ պետությունների միացյալ ուժերը չէին միայն այն գործոնը, որ կանգնեցնելու էր կայզերական Գերմանիայի «խելագար թափը». առկա էր մի այլ, ավելի հուժկու գործոն։ Դա դեպի ամեն կարգի նվաճողներն ու բռնադրավիչները ժողովուրդների տածած խոր ատելությունն էր, որ միացնում էր նրանց, բացառիկ կուռ ամբողջություն ստեղծում և դարձնում անպարտելի մի ուժ, որի միահամուռ հարվածների ներքո տեղի է տալիս անխորտակելի թվացող ամեն մի նվաճող ու գաղութարար։ Բանաստեղծը նման միասնական ուժի հիանալի մարմնավորումն էր համարում Ռուսաստանի ժողովուրդների կռիվը ընդդեմ ընդհանուր թշնամու։

Եվ այդ է պատճառը, որ բանաստեղծին վշտացրել ու անհանգստացրել են այն խմորումները, որոնց նպատակն էր խարխլել ընդհանուր թշնամու դեմ ելած ժողովուրդների միասնությունը, ազգային կրքեր բորբոքելու միջոցով վտանգել նրանց համերաշխությունը։ Հովհ. Թումանյանը հիանալի գիտակցում էր, որ այդ արհավիրքի օրերին բուրժուական հրապարակախոսների կողմից բարձրացված անհեռատես ազգային բանավեճերը կարող են ճակատագրական լինել այս կամ այն ժողովրդի համար։ Մասնավորապես վտանգավոր էին ռուս և անդրկովկասյան ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունները կասկածի տակ առնող վեճերը, որոնք կարող էին թշնամացնել ժողովուրդներին, և այդ դեպքում արդեն որևէ աղդի անկումը կդառնար անխուսափելի։

Սակայն Թումանյանը համոզված էր, որ ժողովուրդներին թշնամացնելու գաղափարը կարող է համակել միայն առանձին գործիչների։ Այդպիսի գործիչների դեմ, որոնք պատմական կամ այլ փաստերի կեղծարարության միջոցով ցանկացել են բարեկամ ժողովուրդներին թշնամացնել, բանաստեղծը տարել է համառ և սկզբունքային պայքար։

Ժողովուրդների փոխհարաբերությունների հարցը, մանավանդ պատերազմի տարիներին, միշտ գտնվել է Թումանյանի ուշադրության կենտրոնում։ Այդ ասպարեզում ծավալվող բանավեճի հիմնական ծանրությունը կամովին իր ուսերին առած, նա ձգտել է անարձագանք չթողնել հակառակորդ կողմի ազգերին թշնամացնելու նպատակով կիրառվող բանսարկությունները, որոնց մեջ մտնում էին այս կամ այն հասարակական երևույթների չարամիտ մեկնաբա-

---

22 Նույն տեղում, էջ 104։

նումները, ազգային կրքեր բորբոքող զանազան խնդիրների առաջ քաշումը, ազգային հերոսների զրպարտումը և այլն։ Թումանյանին, օրինակ, անչափ վրդովեցրել են ազգային հերոս Անդրանիկի վերաբերյալ ռուս և վրաց պաշտոնական թերթերում տպագրված զրպարտչական մի քանի հոդվածները, որոնց համաձայն Անդրանիկն իբր թե «խմբեր է կազմում վրացիների դեմ»։

Հովհ. Թումանյանը, ստուգելու նպատակով, թե արդյոք վրաց ժողովրդի միտքն ու հոգին թունավորող նման հայտարարության համար որևէ հիմք կա՞, Անդրանիկին ծանոթացնում է այդ հոդվածների բովանդակությանը։ Հայ ազգային հերոսը զարմանում է, «որ մի որևէ վրացի,— վկայում է բանաստեղծը,— թեկուզ նրանց միջի ամենահիմարն էլ, կարող է մտքովն էս տեսակ բան անցկացնել։

— Խե՜ղճ մարդիկ, բացականչեց. Անդրանիկը եթե խումբ կազմելու լինի, ոչ թե ձեր դեմը գալու համար կկազմի, այլ ձեզի օգնելու, եթե երբևիցե դուք էլ նեղության մեջ լինիք մի էնվերի ձեռքից, ինչպես մեր ժողովուրդն է... էսպես գրե նրանց...

Էսպես ասավ Անդրանիկը։ Բայց ո՞ւմ գրեմ, որ տեղ հասնի, և ի՞նչպես ասես, որ հավատա ու ամաչի ու լոի նա, որ, ինչդես ասի, կամ մի թշվառական տխմար է կամ անսիրտ չարախոս»[23]։

Եվ որպեսզի հերքի հայ ազգային հերոսի մասին նետված հերյուրանքները ու ներկայացնի Անդրանիկի դիրքորոշումը ազգերի նկատմամբ, Թումանյանը տալիս է նրա դիպուկ բնութագիրն այդ տեսանկյունից. «...Նրանք ո՞ր տեղից են ճանաչում Անդրանիկին, և իսկի կարո՞ղ են երևակայել, թե նա ինչ զգացմունք ունի դեպի նույնիսկ քուրդը, խաղաղ քուրդը, թե ինչպես է նա խոսում Շեղբրտան և նման ուրիշ ցեղերի մասին, և ինչպես է վերաբերում նրանց... ո՞ւր մնաց մտածեր վրացիների դեմ, ինչպես գրում ու տպում են հրապարակավ...

Էս տեսակ հոդված կարդալուց հետո մարդ լցվում է անհուն ցավով ամեն անգամ, երբ լսում է նրա, Անդրանիկի սիրած խոսքը, որ հաճախ կրկնում է. «Երբ իրիկունը գլխներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին։ Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...»[24]։

Հովհ. Թումանյանը, իհարկե, համոզված է, որ նման երևույթները պատահական չեն, այլ ազգամիջյան ատելություն բորբոքող քաղաքականության դրսևորումներն են, որոնց պատճառով նա խիստ անհանդստանում է և «լցվում ցավով, որովհետև գիտե՝ դիմացինը կամ տխմարի մինն է, կամ չարի մինը, երկու դեպքումն էլ անհուսալի, թե պիտի զղջա ու ետ առնի իր թունավոր խոսքը։ Բայց ավելի ևս ցավալի է, որ վրացի ինտելիգենցիան թույլ է տալիս իր մամուլի մեջ էդպես խոսքեր տպվեն անպատիժ ու անպատասխան», չէ՞ որ նման երևույթները կարող են հեռուները տանել, անախորժությունների և, որ ավելի սոսկալի է՝ զարհուրելի հետևանքների հասցնել, մինչդեռ հայտնի է, որ վրաց մտավորականության զգալի մասը «նախանձախնդիր են իրենց ժողովրդի առողջ կյանքին։ Եթե Անդրանիկը խումբ կազմեր վրացիների դեմ, երբեք էնքան վնաս չպետք է տար վրաց ժողովրդին, ինչքան վնաս են տալիս էս տեսակ հրապարակախոսները, որ թունավորում են ժողովրդի միտքն ու հոգին։ Չէ՞ որ

23 Նույն տեղում, հատ. VI, էջ 224։
24 Նույն տեղում, էջ 224—225։

նրանք էլ են սպանիչներ, և ամենավատ սպանիչները, որ մարդկանց մեջ սպանում են ամենաազնիվն ու ամենագեղեցիկը՝ սերն ու հավատը դեպի իր նմանը, իր ընկերն ու հարևանը»[25]։

Թումանյանը հավաստում է, որ ամեն ոք պետք է սիրի հարևան ժողովրդի ազատությունը և պայքարի այդ ազատության համար՝ «պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորված է մյուսի երջանկությունով»[26]։

Բանաստեղծն ամեն կերպ աշխատել է կյանքից վերցված ամենաբնորոշ օրինակներով ցույց տալ, որ դարավոր հարևանության մեջ ապրող հայ և վրաց ժողովուրդները միշտ կապված են եղել բարեկամական սերտ կապերով։ 1919 թ. Լ. Ղիփիանուն գրած նամակի մեջ Թումանյանը պատմում է, թե ինչպես հայ-վրացական ընդհարումների տխուր օրերին Վրաստանի և Հայաստանի սահմանները բաժանող կամրջի երկու հակադիր ծայրերին կանգնեցրել էին վրացի ու հայ զինվորների։ «Նրանք երկուսն էլ հրացաններն ուսերին բռնած՝ նայում են իրար»։ Պարզվում է, որ այդ զինվորները երկար տարիների ընկերներ են, միասին լավ ու վատ օրեր են անցկացրել, «միասին կերել ու միասին բնել», բայց տերերի կամքով՝ նրանք հրացաններն ուսերին կանգնել են դեմ դիմաց։ Սակայն զինվորները ձգտում են միմյանց։ Նրանք իրենց շրջակայքում գտնվող գյուղացիներին խնդրում են ստուգել, թե արդյոք հրամանատարությունից ոչ ոք չի երևում։ «Երբ իմանում են՝ որ չկան՝ վազում են, գալիս կամուրջի մեջտեղը գրկվում, համբուրվում, նորից ետ վազում իրենց տեղը կանգնում ու դարձյալ հրացանները ուսերին նայում են իրար»։

Մեջբերելով այս իրական փաստը, ժողովուրդների մեծ հաշտարարն ընդհանրացնում է. «...էն գլխից մինչև էս գլուխը։ Ինչ կռիվ ու կոտորած ուզում է լինի՝ հնագույն բռնապետներից մինչև դեմոկրատիկ հասարակությունները՝ միշտ սարքված են երկրները կառավարողների և ղեկավար շրջանների ու ղեկավար մարդկանց ձեռքով։ Եվ միշտ էդ արվել է հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդու կամքի և ցանկության հակառակ։

Եվ հենց դրա մեջն է էն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ էդ բոլոր աղետների մեջ ոչ թե հասարակ ժողովուրդն է մեղավոր, այլ նրա իշխանավորները, և քանի շատ էդ վերջինները թուլանան, իսկ իրենք ժողովուրդները դառնան ավելի գիտակից ու անմիջականորեն մոտենան իրար, և քանի իրավունքն ու իշխանությունը անցնի ժողովրդին, հասարակին, ընդհանուրին, աշխատողին—էնքան էլ մեղմանալու են էդ աղետները և վերջապես վերանալու»[27]։

Ցույց տալու համար, որ XX դարի երկրորդ տասնամյակի վերջին տարիներին ստեղծված հայ-վրացական փոխհարաբերություններն ընդհանուր ոչինչ չունեն այդ ժողովուրդների՝ իրականում գոյություն ունեցող հոգեհարազատության հետ, զուրկ են պատմական հիմքից, Հովհ. Թումանյանը դիմում է գարեբի վաղեմիություն ունեցող փաստերի և ապացուցում, որ Լոռու կամուրջի վրա միմյանց ձգտող հայի ու վրացու մտերմությունը խոր պատմական արմատներ ունի, որոնք գնում սուզվում են անհիշելի ժամանակների խորքը. «Վերջին տեղատվությունը» հոդվածում հեղինակը նշում է. «Ազգերի հարևա-

25 Նույն տեղում, էջ 225։

26 «Սովետական գրականություն», 1962, № 3, էջ 112։

27 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 423—424։

նութիւնների մեջ դժվար կարելի է գտնել ավելի լավ հարևաններ, քան եղել են հայն ու վրացին։ Վերցնենք՝ որ հարևան ազգերը կուզեք. Անգլիան ու Ֆրանսիան, Ֆրանսիան ու Գերմանիան, Իտալիան ու Ավստրիան... Թուրքն ու պարսիկը և այլն և այլն։ Ամենքն էլ իրար դեմ պատերազմ են մղել և հաճախ անհաշտ ու երկար ժամանակ, բայց պատմության մեջ հայտնի չի հայ-վրացական պատերազմ։ Երկու ժողովուրդներն էլ եղբայրորեն կարեկցել են իրար, իրար օգնել ու միասին կանգնել դիմադրավել են ընդհանուր թշնամուն, լավ հասկանալով, թե իրենց ճակատագրերն ինչպես սերտ կապված են իրար հետ»[28]։ Թումանյանը դաշնակցականներին դատապարտել է հատկապես այն բանի համար, որ նրանք չեն ցանկացել շարունակել բարեկամական հարաբերությունները վրացիների հետ և իրենց հույսը դրել են «հեռու բարեկամների»՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի վրա, հավատացել նրանց խոստացած օգնությանը և ղանագան խժդժությունների դիմելով՝ գժտվել հարևան ժողովուրդների հետ։

Ժողովուրդների խաղաղ համագործակցության ու եղբայրության, խաղաղության ու ազգերի բարեկամության գաղափարների հաղթանակի համար մեծ հումանիստի մաքառումները այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և ծառայում են ժողովուրդների միջև համերաշխություն ստեղծելու գործին։

ТУМАНЯН ГЛАШАТАЙ ДРУЖБЫ НАРОДОВ

Т. А. КАРАПЕТЯН

(Резюме)

Любовь и дружеские чувства к русскому, закавказским и другим народам—одна из характерных и славных традиций армянской литературы. В своем творчестве Ованес Туманян воспринял и развил эту добрую традицию, дал наиболее яркий синтез идеи братства и содружества народов.

Великий поэт жил и творил в эпоху, когда в результате хищнической политики империалистических держав значительная часть армянского народа подвергалась систематическому уничтожению. И он глубоко осознал, какое великое значение имел акт присоединения Восточной Армении к России. Глубокий и тонкий знаток истории народов Ов. Туманян, изучая ход и развитие исторических событий, пришел к убеждению, что спасителем армянского и связанных с ним общей судьбой других народов Закавказья всегда был русский народ.

Творчество Ов. Туманяна не потеряло своей жизненности и служит великому делу установления мира и дружбы между народами.

[28] «Ժողովրդի ձայն», 1918, № 60։